Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Տիգրան Պետրոսյանի դիմումի ուսումնասիրության հիման վրա վարույթի հարուցումը մերժելու մասին որոշման վերաբերյալ[ուղղ]

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, հաշվի առնելով, որ թե՛ ներպետական օրենսդրությամբ, թե՛ միջազգային չափորոշիչներով մասնավոր շահը ի պաշտոնե կատարած գործողության, անգործության կամ որոշման կայացումն է, որի արդյունքում պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձը կամ կազմակերպությունը պաշտոնատար անձի կողմից դրսևորած գործողության, անգործության կամ կայացրած որոշման դիմաց ստանում է որևէ արտոնություն կամ առավելություն:

Մինչդեռ, սույն դիմումով ներկայացրած փաստերի շրջանակում կարգապահական վարույթը ներկայացվում է Բարձրագույն դատական խորհուրդ, որը հանդիսանում է պետական կառավարման համակարգի կոլեգիալ կառավարման մարմին, և ըստ էության ներկայացված փաստերով որևէ կերպ չի հիմնավորվում, թե կարգապահական վարույթ հարուցելով Արդարադատության նախարարն ինչ արտոնություն կամ առավելություն է տրամադրել իր հետ փոխկապակցված անձին կամ կազմակերպությանը: Հետևաբար, սույն գործով ներկայացված փաստերի համատեքստում կարգապահական վարույթ հարուցելն ինքնին չի կարող մեկնաբանվել որպես Արդարադատության նախարարի մասնավոր շահի սպասարկում: Մինչդեռ շահերի բախումը անձի մասնավոր շահի անհարկի ազդեցությունն է պաշտոնեական պարտականությունների կատարման անաչառության վրա, օգուտ կամ առավելություն ապահովելով իր հետ փոխկապակցված անձի կամ կազմակերպության համար:

Այնուամենայնիվ, ներկայացված հարցերի պարզաբանում ստանալու և հնարավոր կոռուպցիոն ռիսկերը չեզոքացնելու համար Հանձնաժողովը կիրականացնի համապատասխան լրացուցիչ ուսումնասիրություններ, որոնց հիման համապատասխան առաջարկություն կներկայացնի Արդարադատության նախարարությանը:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 01-ԴՄ

ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 06 հունիսի 2023 թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հ. Հարությունյանի, Ա. Փաշինյանի, Մ. Գալստյանի և Լ. Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Տիգրան Պետրոսյանի դիմումը, **պարզեց**.

Դիմումի բովանդակությունը և պահանջը

2023 թվականի մայիսի 30-ին Հանձնաժողովում առձեռն ստացվել է Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Տիգրան Պետրոսյանի դիմումը:

Դիմումատուն նշել է, որ.

1. 2023 թվականի մարտի 27-ին ՀՀ արդարադատության նախարարի N 20-Ա որոշմամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) կողմից «Շոլց ԱԳ» ընկերությունն ընդդեմ Հայաստանին (գանգատ թիվ 16528/10) գործով 2019 թվականի հունվարի 24-ին կայացված վճռի հիմքով կարգապահական վարույթ է հարուցվել դատավորներ Սամվել Թադևոսյանի, Աստղիկ Խաառատյանի, Արտակ Բարսեղյանի և Տիգրան Պետրոսյանի նկատմամբ:
2. Սույն կարգապահական վարույթը հարուցելու օրվա դրությամբ www.arlis.am կայքում տեղադրված են ՀՀ մասնակցությամբ վեճերի վերաբերյալ ՄԻԵԴ թվով 197 վճիռներ,

որոնց գրեթե կեսով ճանաչված է մարդու իրավունքների խախտում, իսկ դրանց կեսից ավելիի դեպքում՝ մարդու իրավունքների խախտումը ճանաչված է ՀՀ դատավորների կողմից քննված քրեական, վարչական և քաղաքացիական գործերի կապակցությամբ: ՄԻԵԴ այն վճիռների հիման վրա, որոնցով ճանաչվել է մարդու իրավունքների խախտում և որոնց ուժի մեջ մտնելուց հետո չի անցել 15 տարի, արդարադատության նախարարի կողմից մինչ այժմ կարգապահական վարույթ է հարուցվել թվով 7 դատավորի նկատմամբ, ընդ որում հայտնի չէ, թե ինչ հաջորդականությամբ կամ սկզբունքով են ընտրվում այն գործերը և դատավորները, որոնց նկատմամբ հարուցվում է կարգապահական վարույթ:

3. Հատկանշական է, որ Արդարադատության նախարարի կողմից վարույթ է հարուցվել 2019 թվականի հունվարի 24-ի ՄԻԵԴ վճռի հիմքով, այն դեպքում, որ ավելի վաղ՝ 2017 և 2018 թվականներին հրապարակվել է ՄԻԵԴ վճիռներ, որոնցով ՀՀ դատարաններում քննված գործերի կապակցությամբ արձանագրվել է մարդու իրավունքների խախտում: Դա վկայում է արդեն իսկ հարուցված կարգապահական վարույթներով պատասխանատվության ենթարկված դատավորների նկատմամբ արդարադատության նախարարի ակնհայտ կողմնակալ վերաբերմունքի մասին:
4. Միաժամանակ, դատավորների կարգապահական պատասխանատվության ենթարկող մարմնի՝ Բարձրագույն դատական խորհրդի ներկայիս նախագահը (Կարեն Անդրեասյան) և Արդարադատության նախարարը (Գրիգոր Մինասյան) ընկեր ու գաղափարակից են, ինչպես նաև կապված են ընդհանուր տնտեսական շահով: Սույն հանգամանքները իր հրապարակային ելույթում հավաստել է Բարձրագույն դատական խորհրդի ներկայիս նախագահը:

Դիմումով ներկայացված պարզաբանման ենթակա հարցերը

1) Ի՞նչ սկզբունքով է Արդարադատության նախարարը ընտրում այն գործերը կամ դատավորներին, որոնց նկատմամբ արդեն իսկ վարույթ է հարուցել կամ պատրաստվում է հարուցել (ժամանակագրական, այբբենական, պատահականության և այլն):

2) Արդյո՞ք ՀՀ կառավարությունն ի դեմս լիազոր մարմնի ունի դատավորների դեմ ՄԻԵԴ վճիռների հիմքով կարգապահական վարույթներ հարուցելու և նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու մշակված ծրագիր, եթե այո, ապա ե՞րբ է այն կազմվել և ինչպե՞ս է իրացվում:

3) Արդյո՞ք Բարձրագույն դատական խորհրդի նախագահի հետ ընկերական, գաղափարական և ընդհանուր տնտեսական շահով պայմանավորված կապերի պայմաններում տվյալ հիմքով կարգապահական վարույթ հարուցելու նախարարի գործունեությունն ընդհանրապես և մեր նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առնչությամբ, մասնավորապես կոռուպցիոն առումով ռիսկային չէ և չի հանգեցնում շահերի բախման, վարքագծի կանոնների և այլ սահմանափակումների խախտումների:

5. Դիմումին կից ներկայացվել է Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի 2023 թվականի մարտի 27-ի թիվ 20-Ա որոշման պատճենը, Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանի հարցազրույցի ինտերնետային հղումը և հայտարարագրերի պատճենները:
6. Վերոնշյալով պայմանավորված՝ դիմումատուն դիմումում հղում կատարելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերին, 27-րդ հոդվածի 1-ին մասին, 31-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 32 և 33-րդ հոդվածներին՝ պահանջել է Հանձնաժողովին հարուցել վարույթ և ընդունել եզրակացություն Գրիգոր Մինասյանի կողմից վարքագծի կանոնների, շահերի բախման և այլ սահմանափակումների խախտելու, ինչպես նաև խախտման հետևանքների կամ իրավիճակի չեզոքացման, Նախարարին պատասխանատվության ենթարկելու առաջարկության վերաբերյալ:

Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

7. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ի թիվս այլ հիմքերի, վարույթ կարող է հարուցվել յուրաքանչյուր անձի (անձանց) գրավոր դիմումի հիման վրա:
8. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովը՝ քննում և լուծում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումներ:
9. Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը մերժում է վարույթի հարուցումը, եթե դիմումի ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ դիմումում բարձրացված հարցերը դուրս են Հանձնաժողովի իրավասությունից:
10. «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է բարեվարքության համակարգի տարր հանդիսացող շահերի բախումը, որի համաձայն՝ **շահերի բախումն իրավիճակ է,** երբ պաշտոն զբաղեցնող անձի **մասնավոր շահերն** ազդում են կամ կարող են ազդել վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա:
11. Նույն օրենքի նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահը ներառում է որևէ արտոնություն իրեն կամ իր հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև այն անձանց կամ կազմակերպություններին, որոնց հետ ինքը կամ իր հետ փոխկապակցված անձն ունի գործարար, քաղաքական կամ այլ գործնական կամ անձնական հարաբերություններ: Գործարար հարաբերությունները ներառում են

տնտեսական, տնտեսավարման կամ գործարքներից ծագող ցանկացած հարաբերություններ, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել օգուտների ստացման այդ հարաբերությունների մասնակիցների կամ նրանցից որևէ մեկի համար: Քաղաքական հարաբերությունները ներառում են որևէ կուսակցության մասնակցության կամ տվյալ կուսակցության այլ անդամների հետ ունեցած գործարար կամ այլ գործնական կամ անձնական կապի ուժով ծագող հարաբերությունները:

Շահերի բախման վերաբերյալ միջազգային չափորոշիչների և սահմանումների շրջանակը

12. Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից սահմանված «Հանրային ծառայողների վարքագծի կանոնագրքի» (այսուհետ՝ Վարքագծի կանոնագիրք) համաձայն՝ (R(2000)10 Հանձնարարական, ընդունված 106-րդ նստաշրջանի ընթացքում 2000 թվականի մայիսի 11-ին, Հոդված 13)[1] շահերի բախումն առաջանում է բոլոր այն դեպքերում, երբ պաշտոնատար **անձի մոտ առկա է անձնական այնպիսի շահ**, որը կարող է ազդել կամ թվում է, թե կարող է ազդել պաշտոնատար անձի պաշտոնեական լիազորությունների անաչառ և օբյեկտիվ իրականացման վրա: Այս պարագայում անձնական շահը ենթադրում է իր անձի կամ իր ընտանիքի անդամների, մերձավոր ազգականների, ընկերների, անձանց կամ կազմակերպությունների համար, որոնց հետ պաշտոնատար անձն առնչություն ունի, առավելությունների կամ արտոնությունների ձևավորում:
13. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ) շահերի բախումը սահմանում է որպես **հակասություն պաշտոնատար անձի մասնավոր շահի և պաշտոնեական պարտականությունների միջև**, որի պարագայում անձի **մասնավոր շահը կարող է ոչ պատշաճ կերպով ազդել պաշտոնեական պարտականությունների իրականացման վրա** (ՏՀԶԿ Գործիքակազմ հանրային պետական ոլորտում շահերի բախման կառավարման վերաբերյալ, տես էջ 13):

[1] https://rm.coe.int/toolkit-for-managing-conflict-of-interest-in-the-public-service-en/168097ed1f

14. Թրանսփարենսի Ինթերնեյշնլ միջազգային կազմակերպությունը շահերի բախումը սահմանում է հետևյալ կերպ[2]. «Շահերի բախումն այն իրավիճակն է, երբ անձը կամ կազմակերպությունը, որտեղ անձն աշխատում է (պետական կառավարման համակարգ, բիզնես, զանգվածային լրատվության միջոց կամ ոչ առևտրային կազմակերպություն), առկա է հակասություն ի պաշտոնե բխող պարտավորությունների, լիազորությունների և մասնավոր շահի միջև (Թրանսփարենսի Ինթերնեյշնլ, Հակակոռուպցիոն բացատրական ուղեցույց):

Շահերի բախումը ծագում է բոլոր այն դեպքերում, երբ առկա է **անձնական շահ (հարաբերություն), որը փաստացի ազդում է, կարող է ազդել կամ թվում է, թե ազդում է պաշտոնական լիազորությունների/պարտականությունների անաչառ և օբյեկտիվ իրականացման վրա**:

Հանձնաժողովի պատճառաբանություններն ու եզրահանգումը

15. Դիմումի առնչությամբ որոշում կայացնելու համար վերը նշված իրավակարգավորումների շրջանակներում Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ դիմումի բովանդակությանը և պարզել, թե արդյո՞ք գործող իրավակարգավորումների շրջանակներում Հանձնաժողովն օժտված է համապատասխան լիազորությամբ և կարող է որոշում կայացնել բարձրացված հարցերի առնչությամբ:

Մասնավորապես՝

1) Ի՞նչ սկզբունքով է Արդարադատության նախարարը ընտրում այն գործերը կամ դատավորներին, որոնց նկատմամբ արդեն իսկ վարույթ է հարուցել կամ պատրաստվում է հարուցել (ժամանակագրական, այբբենական, պատահականության և այլն):

2) Արդյո՞ք ՀՀ կառավարությունն ի դեմս լիազոր մարմնի ունի դատավորների դեմ ՄԻԵԴ վճիռների հիմքով կարգապահական վարույթներ հարուցելու և նրանց

[2] Transparency International, The Anti-Corruption Plain Language Guide, էջ 11, https://images.transparencycdn.org/images/2009_TIPlainLanguageGuide_EN.pdf

կարգապահական պատասխանատվության ենթարկելու մշակված ծրագիր, եթե այո, ապա ե՞րբ է այն կազմվել և ինչպե՞ս է իրացվում:

3) Արդյո՞ք Բարձրագույն դատական խորհրդի նախագահի հետ ընկերական, գաղափարական և ընդհանուր տնտեսական շահով պայմանավորված կապերի պայմաններում տվյալ հիմքով կարգապահական վարույթ հարուցելու նախարարի գործունեությունն ընդհանրապես և մեր նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առնչությամբ, մասնավորապես կոռուպցիոն առումով ռիսկային չէ և չի հանգեցնում շահերի բախման, վարքագծի կանոնների և այլ սահմանափակումների խախտումների:

Միաժամանակ, Հանձնաժողովը դիմումով բարձրացված հարցերը յուրաքանչյուր գործով գնահատում է «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված շահերի բախման դրույթների պահանջների սահմաններում՝ նշված դրույթների բովանդակային էությունը բացահայտելով նաև միջազգային չափորոշիչների համատեքստում:

16. Տվյալ պարագայում, ուսումնասիրելով Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Տիգրան Պետրոսյանի դիմումով բարձրացված հարցերի հիմքով վկայակոչված հանգամանքները, Հանձնաժողովն արձանագրում է, որ վերոնշյալ առաջին երկու հարցերը ենթակա չեն քննարկման Հանձնաժողովի լիազորությունների շրջանակում, հետևապես, դիմումի հիման ***վարույթ հարուցելու հարցը սույն գործով Հանձնաժողովը գնահատում է բացառապես երրորդ հարցի շրջանակում:***

17. Այսպես, ներպետական նյութական իրավունքի նորմերի բովանդակությունից հետևում է, որ անձի անձնական շահերի և պաշտոնեական պարտականությունների միջև առկա հակասությունն **ինքնին շահերի բախում չի դիտարկում**: Ներպետական օրենսդրությունը շահերի բախման համար որպես պայման դիտարկում է այս կամ այն կերպ **գույքային կամ իրավական դրության բարելավումը, որևէ արտոնության ապահովումը**, որը դրսևորվելու է իրեն կամ իր հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև այն անձանց կամ կազմակերպությունների նկատմամբ, որոնց հետ ինքը կամ իր հետ փոխկապակցված անձն ունի գործարար, քաղաքական կամ այլ գործնական կամ անձնական հարաբերություններ:

Շահերի բախման վերաբերյալ միջազգային չափորոշիչների և սահմանումների բովանդակությունից ևս հետևում է, որ շահերի բախումն, ըստ էության, ***անձնական և հանրային/պաշտոնեական շահերի (հարաբերությունների)՝ միջև առկա հակասություն է***: Յուրաքանչյուր այն դեպքում, երբ առկա է այնպիսի հարաբերություն, որի առկայությամբ կարող է պայմանավորել կամ ազդեցություն ունենալ անձի կողմից պաշտոնեական լիազորությունների իրականացման վրա, ապա առկա է շահերի բախման ռիսկ: Խիստ կարևոր է, որ շահերի բախման մեկնաբանման ընթացքում կառավարման տարբեր ոլորտների առանձնահատկությունները չանտեսվեն այնպես, որ խաթարվի իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիմնարար սկզբունքը, և հնարավոր պատասխանատվության կիրառման գործընթացը չհանգեցնի իշխանության մեկ ճյուղի կողմից մյուսի գործունեության միջամտության:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում քննարկման առարկա դարձնել հարաբերությունների կողմերը, զբաղեցրած պաշտոնները և այն խնդիրները, որոնց կապակցությամբ նշված սուբյեկտներն առնչություն ունեն.

1) Սուբյեկտներից մեկը հանդիսանում է պետական կառավարման համակարգի մարմնի ղեկավար, այս պարագայում Արդարադատության նախարար, ով գործում է Սահմանադրության և օրենսդրությամբ սահմանված լիազորությունների շրջանակում:

2) Սուբյեկտներից մյուսը հանդիսանում է Բարձրագույն դատական խորհրդի նախագահ: Բարձրագույն դատական խորհուրդը սահմանադրական մարմնի կարգավիճակ ունեցող անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը և գործում է կոլեգիալության հիման վրա: Բարձրագույն դատական խորհրդի անդամներից հինգը հանդիսանում են դատավոր անդամներ, մնացած հինգը՝ գիտնական անդամներ, նրանցից յուրաքանչյուրը ինքնուրույն ձայնի իրավունքով մասնակցում են որոշումների կայացման գործընթացին: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան:

Հետևաբար՝ դիմումում ներկայացված երկու սուբյեկտներն իրականացնում են Սահմանադրությամբ և օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորություններ, որոնք ուղղված են հանրային շահի իրացմանը:

18. Սույն գործով՝ շահերի բախման համատեքստում, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում գնահատել, արդյո՞ք ընկերական, գաղափարական կապերի և առկա ընդհանուր տնտեսական շահերի առկայության պայմաններում մի պետական մարմնի ներկայացուցչի՝ այս դեպքում Արդարադատության նախարարի կողմից կարգահապական վարույթ հարուցելը հանգեցնում է վարքագծի կանոնների, շահերի բախման և անհամատեղելիության պահանջների խախտման:

Այսպես, թե՛ ներպետական օրենսդրությամբ, թե՛ միջազգային չափորոշիչներով մասնավոր շահը ի պաշտոնե կատարած գործողության, անգործության կամ որոշման կայացումն է, որի արդյունքում պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձը կամ կազմակերպությունը պաշտոնատար անձի կողմից դրսևորած գործողության, անգործության կամ կայացրած որոշման դիմաց ստանում է ***որևէ արտոնություն կամ առավելություն:*** Մինչդեռ, սույն դիմումով ներկայացրած փաստերի շրջանակում կարգապահական վարույթը ներկայացվում է Բարձրագույն դատական խորհուրդ, որը հանդիսանում է պետական կառավարման համակարգի կոլեգիալ մարմին[ուղղ], և ըստ էության ներկայացված փաստերով որևէ կերպ չի հիմնավորվում, թե կարգապահական վարույթ հարուցելով Արդադարադատության նախարարն ինչ արտոնություն կամ առավելություն է տրամադրել իր հետ փոխկապակցված անձին կամ կազմակերպությանը: Ընդ որում, ներկայացված հիմքով կարգապահական վարույթ հարուցելու լիազորությունն Արդարադատության նախարարի համար սահմանված է օրենքով: Հետևաբար, սույն գործով ներկայացված փաստերի համատեքստում կարգապահական վարույթ հարուցելն ինքնին չի կարող մեկնաբանվել որպես Արդարադատության նախարարի մասնավոր շահի սպասարկում: Մինչդեռ, շահերի բախումը անձի մասնավոր շահի անհարկի ազդեցությունն է պաշտոնեական պարտականությունների կատարման անաչառության վրա, օգուտ կամ առավելություն ապահովելով իր հետ փոխկապակցված անձի կամ կազմակերպության համար:

19. Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ նշված կարգապահական վարույթն հարուցելու համար որևէ հաջորդականություն կամ սկզբունք սահմանված չէ, ապա Հանձնաժողովն արձանագրում է, որ այն ***դիմումի հիման վրա շահերի բախման վերաբերյալ վարույթ հարուցելու հարցի շրջանակից դուրս է:***

Այնուամենայնիվ, ներկայացված հարցերի պարզաբանում ստանալու և հնարավոր կոռուպցիոն ռիսկերը չեզոքացնելու համար Հանձնաժողովը կիրականացնի համապատասխան լրացուցիչ ուսումնասիրություններ, որոնց հիման համապատասխան առաջարկություն կներկայացնի Արդարադատության նախարարությանը:

20. Գործող օրենսդրությամբ սահմանված իրավանորումների համաձայն՝ ***օրենսդիրը իրավասու մարմնին պարտավորեցնում է դիմումի հիման վրա վարույթ հարուցելու հարցի լուծմամբ գնահատել դիմումի առարկան (պահանջը)՝ ելնելով Օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակից***, որի արդյունքում միայն իրավասու վարչական մարմինն իրավունք ունի որոշում կայացնել համապատասխան վարույթ հարուցելու կամ մերժելու մասին:

Մեկնաբանելով Հանձնաժողովի կողմից դիմումի առնչությամբ որոշում կայացնելու լիազորությունները՝ ՀՀ Վարչական դատարանը թիվ ՎԴ/1836/05/20 վարչական գործով 2021 թվականի ապրիլի 27-ին կայացված վճռով գտել է, որ Հանձնաժողովը վարույթի հարուցման փուլում քննարկման առարկա է դարձնում դիմումի առերևույթ ընդունելիության մասով բովանդակությանը ներկայացվող պահանջները, այսինքն՝ որքանով է դիմումով բարձրացված հարցն իր բնույթով վարույթ հարուցելու հիմք հանդիսանում և որքանով է այն գտնվում հանձնաժողովի իրավասությունների ներքո (...): Դատարանը եզրահանգել է, որ (...) այն դեպքում, երբ դիմումով բարձրացվել է հարց, որն առերևույթ դուրս է հանձնաժողովի կողմից հարուցման ենթակա վարույթների նյութական առարկաների շրջանակից, ապա դիմումով վարույթ հարուցելը մերժվում է:

Համադրելով Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Տիգրան Պետրոսյանի դիմումը և իրավական կարգավորումները՝ Հանձնաժողովը եզրահանգում է, որ դիմումով բարձրացված հարցերը դուրս է Հանձնաժողովի իրավասությունից:

Հաշվի առնելով վերոգրյալը, և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Տիգրան Պետրոսյանի 2023 թվականի մայիսի 30-ին ներկայացված դիմումի հիման վրա վարույթի հարուցումը մերժել:
2. Սույն որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել Տիգրան Պետրոսյանին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՈՐՈՇՈՒՄ
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի
2023 թվականի հունիսի 6-ի «Վարույթի հարուցումը մերժելու մասին» թիվ 01-ԴՄ
որոշման վրիպակի ուղղման վերաբերյալ

1) 2023 թվականի մայիսի 30-ին Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Տիգրան Պետրոսյանի կողմից Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին հասցեագրված դիմումի ուսումնասիրության արդյունքում 2023 թվականի հունիսի 6-ին կայացված «Վարույթի հարուցումը մերժելու մասին» թիվ 01-ԴՄ որոշման **9-րդ էջի 3-րդ պարբերության** «Բարձրագույն դատական խորհուրդ, որը հանդիսանում է պետական կառավարման համակարգի կոլեգիալ մարմին» **բառերի փոխարեն կարդալ** «սահմանադրական մարմնի կարգավիճակ ունեցող անկախ պետական մարմին» **բառերը:**
2) 2023 թվականի հունիսի 6-ի «Վարույթի հարուցումը մերժելու մասին» թիվ 01-ԴՄ որոշման հրապակմանը կից ներկայացված՝ պարզաբանման նյութի տեքստի 2-րդ պարբերության «Բարձրագույն դատական խորհուրդ, որը հանդիսանում է պետական կառավարման համակարգի կոլեգիալ մարմին» **բառերի փոխարեն կարդալ** «սահմանադրական մարմնի կարգավիճակ ունեցող անկախ պետական մարմին» **բառերը:**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Սույն որոշումը հանդիսանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2023 թվականի հունիսի 6-ին կայացված «Վարույթի հարուցումը մերժելու մասին» թիվ 01-ԴՄ որոշման անբաժանելի մաս: